

Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների
դոկտոր Ռ. Խ. Հակոբյան



**Առաջատար կազմակերպության՝ Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի կարծիքը
Սեդա Արայիկի Թունյանի՝ «Մեղմացում արտահայտող լեզվական միջոցները
(ռուսական դիվանագիտական խոսույթի նյութերի հիման վրա)» թեմայով Ժ.02.04-
«Սլավոնական լեզուներ» (ռուսաց լեզու) մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական
ատենախոսության վերաբերյալ**

Սեդա Թունյանի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված **ատենախոսության թեման արդիական է՝** պայմանավորված դիվանագիտական խոսույթի կարևորությամբ և դրա նկատմամբ աճող հետաքրքրությամբ: Ժամանակակից աշխարհում առկա հակասությունների և ծառայած բազում մարտահրավերների համատեքստում դիվանագիտական խոսույթը դիտարկվում է որպես միջպետական և միջազգային հակամարտությունների հաղթահարմանն ուղղված հաղորդակցման յուրահատուկ գործոն: Հետևաբար, դիվանագիտական հաղորդակցումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակին ծառայող հաղորդակցական մեղմացումը, ինչպես նաև մեղմացման՝ որպես գործաբանական կարգի իրացման օրինաչափություններն ուսումնասիրելու անհրաժեշտությունն ավելի քան ակնհայտ է:

Ատենախոսության **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ ներկայացված հետազոտությունում առաջին անգամ կիրառվում է դիվանագիտական խոսույթի մեղմացում արտահայտող լեզվական միջոցների ուսումնասիրման համալիր մոտեցումը. ներկայացված են մեղմացուցիչների

հիմնական հատկությունները, միաժամանակ վերլուծության են ենթարկվել մեղմացման ռազմավարական և մարտավարական տեսակները:

Ատենախոսության **տեսական նշանակությունը** կայանում է նրանում, որ մի կողմից ընդլայնվում է խոսույթների վերլուծության և խոսքային համագործակցության տերմինաբանական գործիքակազմը, մյուս կողմից՝ ատենախոսությունում կիրառված խոսքային և լեզվական գործունեության վերլուծությունը հստակեցնում է դիվանագիտական հաղորդակցության հանրալեզվաբանական և հոգելեզվաբանական բաղադրիչները: Ատենախոսությունը կարող է հիմք ծառայել «դիվանագիտական խոսույթ» հասկացության հետագա ուսումնասիրման համար, քանի որ բացահայտվում են նշյալ խոսույթի լեզվաբանական հաղորդակցական յուրահատկությունները և փորձ է արվում առաջարկելու միջազգային հարաբերություններում գործող հաղորդակցման սուբյեկտների խոսքային փոխներգործության տեսության հիմունքները:

Ատենախոսության **գործնական նշանակությունն** այն է, որ վերջինիս շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները կարող են կիրառվել բառագիտության, ոճաբանության, լեզվաբանական գործաբանության, խոսույթային վերլուծությանն առնչվող դասընթացները մշակելիս, ինչպես նաև ռուսաց լեզվի գործնական դասընթացներում:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է ուսումնասիրության նպատակներին և առաջադրված խնդիրների լուծման տրամաբանությանը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որտեղ ներկայացված են այն հղումները, որոնց միջոցով հնարավոր է ծանոթանալ հետազոտությունում վերլուծության առարկա դարձած հանրային դիվանագիտական խոսույթի տեքստերին (ընդհանուր՝ 1013 հղում):

Հեղինակն **ատենախոսության առաջին գլխում**՝ «Մեղմացումը որպես խոսքային ակտի գործաբանական կարևորագույն բաղադրիչ», ներկայացնում է վերբալ հաղորդակցման կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները (էջ.11-22), դիտարկում խոսքային ակտերը և դրանց՝ գոյություն ունեցող դասակարգումները (էջ 22-34)՝ համեմատելով քաղաքական և

դիվանագիտական խոսույթները և վեր հանելով դրանց այն առանձնահատկությունները, որոնք առնչվում են խնդրո առարկային, նպատակներին, հասցեատերերին, հիմնական գործառույթներին, ռազմավարական և մարտավարական բաղադրիչներին (էջ 34-46), համեմատում է մեղմացման՝ տարբեր գիտական աշխատություններում առկա սահմանումները (էջ 46-55), հիմնավորում է դիվանագիտական խոսույթը՝ որպես հետազոտության առարկա (էջ 55-62):

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Մեղմացման արտահայտման միջոցների յուրահատկությունները դիվանագիտական խոսույթում», հեղինակը ուրվագծում է դիվանագիտական խոսույթում մեղմացման արտահայտման ուսումնասիրման սահմանները՝ որպես վերլուծության միավոր ընտրելով տեքստը, ինչը, ըստ ատենախոսի, թույլ է տալիս մեղմացման գործառույթներից զատ, մեկնաբանել նաև բուն տեքստը: Ատենախոսը նշում է, որ մեջբերված բոլոր տեքստերն իրենցից ներկայացնում են պաշտոնատար անձանց ելույթներ, սակայն որևէ հստակեցում, թե ովքեր են այդ պաշտոնատար անձինք, ատենախոսի կողմից չի արվում, ինչը, ինչպես նշված է ատենախոսությունում, պայմանավորված է այն հանգամանքով, որ անհրաժեշտ է ուսումնասիրել մեղմացումը որպես խոսքային ակտին բնորոշ երևույթ, այլ ոչ որպես երևույթ, որը բնութագրում է այս կամ այն պետական գործչին: Հեղինակն առանձնացնում է նաև հաղորդակցական մեղմացման ուսումնասիրության հետևյալ սկզբունքները.

- ✓ դիվանագիտական խոսույթի՝ առանձին վերցրած հատվածի նպատակը պայմանավորում է մեղմացման ռազմավարական և մարտավարական բաղադրիչների ընտրությունը, ինչն իր հերթին հիմք է դառնում մեղմացում արտահայտող միջոցների (մեղմացուցիչների) ընտրության համար,
- ✓ որպես մեղմացուցիչներ դիտարկվում են տեքստում առկա բառային այն միավորները, ինչպես նաև բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք մեղմացնում են համապատասխան դենոտատները, կանխենթադրույթները և այլն, իսկ խոսույթի յուրաքանչյուր առանձին դրվագի վերլուծության ժամանակ առանձնացվում են այն բառային միավորները, որոնք կատարում են նշյալ գործառույթը տվյալ համատեքստում,

✓ մեղմացուցիչ հանդիսացող միևնույն բառային միավորը կարող է օգտագործվել մեղմացման միանգամից մի քանի մարտավարական տեսակների իրացման համար: Ուշադրության է արժանի նաև ատենախոսի կողմից մշակված դիվանագիտական խոսույթի վերլուծության նոր մոտեցումը, որը կիրառվում է հետազոտության շրջանակներում: Որպես նմանօրինակ վերլուծության նմուշ՝ ներկայացված են դիվանագիտական խոսույթի թվով 10 հատվածներ (ԱԳՆ մամուլի քարտուղարի հանրային ելույթները, նախարարի՝ հեռուստատեսությամբ հեռարձակված հարցազրույցը, նախագահի մամուլի ասուլիսը և այլն):

Գտնում ենք, որ ուշադրության են արժանի մեղմացման այն ռազմավարական և մարտավարական ենթատեսակները, որոնք ատենախոսը առանձնացնում է որպես վերլուծության վերոնշյալ սկզբունքների կիրառման արդյունք.

- մոդուսային սահմանափակում և դիրեկտիվ (էջ 73),
- ընդդիմախոսի վարկաբեկում և սուբյեկտիվ գնահատման մարտավարություն (էջ 76),
- համոզման մարտավարություն, այլաբանական մեղմացում (էջ 82),
- «ինքնամատուցում», այլաբանական մեղմացում (էջ 85),
- գործողության դրդում, գնահատման մեղմացում (էջ. 91),
- հրամայական կոչեր և հրահանգներ, իմպլիցիտ մեղադրանքի կիրառում (էջ 94),
- վերջնագրի իմպլիցիտ (ներհատուկ) ներկայացում, վարկաբեկման մարտավարություն (էջ 98):

Մեղմացման ռազմավարական յուրաքանչյուր տեսակ օժտված է իր ուրույն մարտավարական գործիքակազմով, և համատեքստից է կախված, թե մարտավարական հնարքներից որը կարող է կիրառվել:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է մեղմացման ռազմավարական և մարտավարական տեսակներին դիվանագիտական խոսույթում: Այս հատվածում ատենախոսն ամփոփում է իր կողմից իրականացված տեքստային բազայի (մոտավորապես 1000 տեքստային դրվագ) վերլուծության արդյունքները, ներկայացնում մեղմացման ռազմավարական և մարտավարական տեսակների՝ իր առաջարկած դասակարգումը (էջ 109): Այս գլխում առկա դիագրամների միջոցով (էջ 110-111) ատենախոսը ներկայացնում է մեղմացման ռազմավարական և մարտավարական տեսակների կիրառման հաճախականությանն առնչվող տվյալներ: Ատենախոսն

առանձնացնում է մեղմացման հիմնական տեսակների գործառույթները և կիրառման ձևերը, վերլուծում է դիվանագիտական խոսույթում առկա մեղմացման արտահայտչամիջոցները, ինչպես նաև դասակարգում դրանք: Բավականին ծավալուն փորձառական նյութի էմպիրիկ վերլուծության արդյունքում ատենախոսը հանգում է լեզվաբանական տեսանկյունից արժեք ներկայացնող մի շարք եզրահանգումների, որոնք վերաբերում են հիմնականում դիվանագիտական խոսույթում կիրառվող մեղմացման յուրահատկություններին:

Ատենախոսության եզրափակիչ մասում ներկայացված են աշխատանքի հիմնական արդյունքները և եզրահանգումները, որոնք ձևակերպված են ուսումնասիրության նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Գտնում ենք, որ Ս. Թունյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական աշխատություն, միաժամանակ, այն զերծ չէ թերություններից:

Կարծում ենք, որ.

1. ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված հետազոտությունը միանշանակ կշահեր, եթե ատենախոսը դիտարկեր ոչ միայն վերբալ, այլ նաև ոչ վերբալ հաղորդակցումը: Հարկ ենք համարում նշել, որ դիվանագիտական ոլորտում հաղորդակցումն ինքնին վերբալ և ոչ վերբալ բաղադրիչների բարդ համակարգ է:
2. Ցանկալի կլիներ անդրադառնալ մեղմացման արտահայտմանը հայերենում: Համեմատությունների անցկացումը, անկասկած, կարող էր նոր փաստեր ի հայտ բերել: Բացի այդ, հետազոտության տրամաբանությունը վկայում է այն մասին, որ հաղորդակցական մեղմացումը դիտարկվում է որպես ընդհանրույթ (ունիվերսալիա), որը բնորոշ է դիվանագիտական խոսույթում կիրառվող բոլոր լեզուներին: Ատենախոսությունում, սակայն, որևէ հիշատակում այս մասին չկա:
3. Ատենախոսությունում առկա մի շարք տեքստեր, մեր կարծիքով, մեղմացում չեն պարունակում (ԱԳՆ մամլո խոսնակի հանրային ելույթից հատվածներ, էջ 72, 100):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սեդա Արայիկի Թունյանի՝ «Մեղմացում արտահայտող լեզվական միջոցները (ռուսական դիվանագիտական խոսույթի նյութերի հիման վրա)» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ավարտուն գիտական աշխատանք, որն ունի կոտ, տրամաբանական կառուցվածք, գրագետ շարադրանք, պատշաճ գիտական ոճ: Պաշտպանության ներկայացված դրույթները լիովին հիմնավորված են ատենախոսության հիմնական մասում:

Ուսումնասիրության նպատակներն ու խնդիրներն իրապես արդիական են և գիտական հետաքրքրություն են ներկայացնում լեզվաբանների համար: Հետազոտությունը բովանդակում է բավարար ելակետային տվյալներ, աղյուսակներ, դիագրամներ:

Աշխատանքի հիմնական դրույթները, եզրահանգումները և արդյունքները ներկայացված են սեղմագրում և հեղինակի հրապարակումներում:

Ներկայացված ուսումնասիրությունը, մեր կարծիքով, լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, ունի իրական և ոչ ֆորմալ բնույթ կրող գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն:

Սեդա Արայիկի Թունյանն արժանի է՝ 10.02.04 - «Սլավոնական լեզուներ» (ռուսաց լեզու) մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի 2021 թվականի փետրվարի 10-ի նիստում (Արձանագրություն N 8): Նիստին ներկա էին Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Գ. Ա. Միրիբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա. Մ. Մուխսիխաչոյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Բ. Հովհաննիսյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Ռ.

Սարգսյանը, ամբիոնի ասիստենտ Ա. Վ. Մելքոնյանը, ամբիոնի լաբորանտ Ն.Ն.Նալբանդյանը:

Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի
օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու



Միրիբյան Գ. Ա.